

ՀԱՆԴԷՍ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ

ՍԿԱՆՏԻՆԱԿԵԱՆ ՏԷՐՈՒԹԻՒՆՔ

Ա

Սկանտինաւեան տէրութիւնք ըսելով կ'իմանանք զՇուետ, զՆորվեկիա և զՏանիմարքա: Գրեթէ հարիւր երեսուն տարի՝ սկսեալ Քոլմարի համբաւաւոր Դաշնակցութեան օրէն 1597ին՝ մինչև Կուսգաֆ Վազայի Շուետաց Թագաւոր ընտրուիլը 1525ին, այս երեք աշխարհներն շատ անգամ միացան ընդ միով գաւազանաւ, պաշտելով երկաթանշիւրն իր ինքնօրինութիւնքը, և որովհետև ասոնց մէջ ամենէն հզօրագոյնը Տանիմարքան էր, անոր համար երեք աշխարհաց ընդհանուր հրամանատուն ալ Տանիմարքայի Թագաւորն եղաւ: Բայց ամենայն ինչ կերպարանափոխեցաւ, երբ Կուսգաֆ Վազա յաջողեցաւ ազատել իր հայրենիքը Տանիմարքային տիրապետութենէն ու ազդեցութենէն, որով Տանիմարքա ու Շուետ առանձին ապրեցան մինչև մեր օրերը: Բայց Նորվեկիա տակաւին միացեալ մնաց Տանիմարքայի հետ, 1450էն մինչև 91814, յորում Քիէլի Դաշնադրութիւնն բաժնելով զինքը Տանիմարքայէն՝ միացուց Շուետի հետ: — Երկու Թագաւորութիւնքն Շուետաց ու Նորվեկիացուց, կը գրաւեն Եւրոպիոյ Հիւսիսակողմը՝ սկսնալ սկանտինաւեան մեծատարած թերակղզին, ընդ մէջ Պալդի և Հիւսիսային ծովուց՝ Ռուսիոյ աչաց տակ: Այս երկիրն որ բաժնուած է երկու տէրութեանց մէջ, ունի 76 միլիոն հնչկա Պրուս. Դ.

տար տարածոց. մեծ է ուրեմն քան զԳաղղիա երկու Հինգերորդ անգամ, բայց բնակիչն կարի սակաւաթիւ, վեց միլիոն միայն: Վերջին աշխարհագիրք 4,204,000 բնակիչ կու տան Շուետիոյ և 1,760,070 Նորվեկիոյ. ուստի յայտ է որ Շուետիոյ բնակիչն նուազ է քան զՊելժիոյ, որ տասնուչորս անգամ փոքր է քան զնա. իսկ Նորվեկիա և ոչ իսկ Բարիզ քաղաքին բնակչաց թիւն ունի: Տանիմարքա որ մետասաներորդ դարուն մէջ լայնածաւալ տէրութեան մը գլուխ անցեր էր, ունեւով ընդ օրինօք զՆուգլանտ և զՆորվեկիա, զՎոլովտիա և զԱնգղիա և երբեմն նաև զՇուետ, այսօր Եւրոպիոյ ամենէն աւելի տկար տէրութեանց կարգէն է, որոյ անկումն սկսաւ Երեսուն ամաց պատերազմէն: Նախ հարկեցաւ շնորհել Շուետիոյ սկանտինաւեան թերակղզւոյն հարաւային մասը՝ հանդէպ Սուետի, ինչպէս նաև Կոդլանտ և Էօզել կղզիները՝ ի Պալդի ծովու. 1814 ամին դաշնադրութեամբ կորսընցուց զՆորվեկիա, և Աւստրիա ու Ռուսիա առին ձեռքէն վերջապէս Էլպայի դքսութիւնքը:

Տանիմարքան ունի հիմա միայն զԵուդլանտ և մէկ քանի կղզիներ՝ 3,800,000 հեկտար տարածութեամբ, և բնակչաց թիւն ալ է գրեթէ 1,800,000. որոյ վերայ պէտք է յաւելուլ Ֆերէօլ, Իսլանտ, Կրէօլանտ և մէկ քանի Անդիլեան կղզիները, որոց բնակիչը չի կրնար փոխարինել Շուետ 24

վիկ-էնդլդայնի կորուստը 800,000 ընկալելով, Ռւրեմի ընդարձակածուտալ աշխարհ մը, ուրոյ բնակիչը մէկ քառակուսի բիլլիոնի վրայ տասն անհատ կ'ընկնայ 'ի Շուետ և Հինգ 'ի Նորվեկիա, հանգիւրձ պղտի Տանի-մարքայով՝ ասոնք են սկանտինաւեան ըստուած տէրութիւնք։ Իսկ թէ որ հաշուելու ըլլանք որ պանդխտութիւնքն յօտար երկիր 1836էն մինչև ց 1863, 53,000 հոգի նուազեցուցին 'ի Նորվեկիա, և 'ի Շուետ 1868ին՝ 27,000, 1860ին՝ 39,000, 1870ին՝ 20,000, և 10,000 Տանիմարքայէն մէկ տարուան մէջ, կը հետեցընենք որ եթէ նոյն քայլով յառաջելու ըլլայ՝ սկանտինաւեան ազինք կորսուելու քան թէ մեծնալու ճակատագրեալ են։

Սկանտինաւեան երեք տէրութիւնք կը կառավարուին սահմանադրական ու ժառանգական կառավարութեամբ։ Շուետ երկար ժամանակ Եւրոպայի ամենէն յուզեալ երկիրն էր, քայլ 1809ին յնդափոխութիւն վերջ տուաւ ամեն տեսակ խռովութեանց։ Պերնատողի ցեղն արմատաւ տացաւ՝ տալով զանձն 'ի շահ և յօգուտ հպատակացը։ Միուա Պերնատող խաղաղութեամբ յետ կառավարելու իր օրդեգրեալ ժողովուրդն երեսուն և չորս տարի, եթէ իբրեւ թագաւոր և եթէ իբրեւ իշխան (1810-1844)։ Օսկար յաջորդեց իր հօրը առանց հակառակութեան, և ապրեցաւ սիրով իր ժողովրդեան հետ։ Սորա հնգետասն ամաց թագաւորութիւնն (1844-1859), նշանաւոր եղաւ մեծամեծ վերանորոգութեամբք։ Գլխաւորն եղաւ այն օրէնքներն՝ որոց զօրութեամբ ազատեց զծարտարարութեստս և զվաճառականութիւն՝ արուեստից անձուկ սահմանէն։ Շուետ Օսկարի պարտական է իր երկաթուղեաց առաջին գիծը 1848ին յնդափոխութիւնն որ աշխարհն յուզեց զՊետլին և զՎիննա, հազիւ թէ լսելի եղաւ 'ի Սլոքընսով։ Օսկար յաջորդեց Կարոլոս Ժե, որ տասուիւրեք տարի միայն թագաւորեց (1859-1872)։ Սա յինքն գրաւեց ժողովուրդը՝ զեղեցիկ տեսլեամբն և ասպետական բարութքը։ Քերթող ու տարուեստագէտ էր միանգամայն, առանց մուռնալու զինուորական ու սահմանադրական կարեւոր խնդիրները։ Կարոլոս Ժե չի յաջողեցաւ ընդունել տալ զինուորական վերանորոգութիւնքը, որք կարեւորք էին

յետ 1866 և 1870 ամաց պատերազմաց, իր թագաւորութեան գլխաւոր արդիւնքն եղաւ՝ ազգային ներկայացուցման վերանորոգութիւնը, զոր պատրաստներ էր արդէն իր նախորդը։ Անոր զօրութեամբ, չորից կարգաց՝ աղնուականաց, քահանայից, քաղաքացեաց ու շինականաց չիփթ ու հնացեալ դրութիւնն ջնջեցաւ բոլորովն 1863ին զեկտեմբերի 7ին՝ հաւանութեամբ ազգին։ Հիմա Շուետի ժողովուրդը ներկայացնողն Աւագածողովն է՝ բաղկացեալ յերկուց խորհրդասենեկաց։ Առաջին խորհրդասենեկին անգամը ինն տարի կը տեսն և կ'ընտրուին 'ի դաւառական կամ 'ի քաղաքատեսչական ժողովոց, և ընտրութեան պայմանքն են երեսուն և հինգ ամաց հասակ, և հաստատուն ընչից ստացուածք 120,000 Փրանքաց, որով ամենէն հատուցումն չեն ընդունիր 'ի տէրութենէ, իսկ երկրորդ խորհրդասենեկին երեսփոխանք երեք տարուան համար միայն կ'ընտրուին, և ընտրութիւնքն առանձին կ'ըլլան քաղաքացու գիւղից համար։ Օրէնքն ընտրողէն քսան և մի տարուան հասակ կը պահանջէ, իսկ ընտրողէն քսան և հինգ։ Ուսից զատ պէտք է որ գոնէ տարի մը բնակած ըլլայ նոյն հասարակութեան մէջ։ և ասոնք կ'ընդունին տարեկան 1680 Փրանք հատուցումն։ Երկուց խորհրդասենեկաց միաձայնութիւնն՝ վճիռ է Աւագածողովն, որ ունի օրինաց զօրութիւն՝ յետ հաստատուելու 'ի թագաւորէն. և այս համաձայնութիւնն կարեւոր է ամենայն օրինաց համար, 'ի բաց առեալ ելումսից ու տրոց օրէնքները։ Թէ որ ելումտական խնդրոց մէջ անհամաձայնութիւն մը ծագի, այն տեսն պարտապէս քուէից առաւելութեան կը նային. իսկ եթէ քուէից թիւն համագոր ըլլայ, նախագահն ունի կրկին քուէ, որով մեծամասնութիւնն մէկէն կը ձեւանայ։ Այսպիսի է ահա 'ի Շուետ ազգային ներկայացուցման դրութիւնն, որ հաստատուեցաւ 1861ին՝ յետ աւստրա-բրուսական մարտին։

Ի բաց հանելով զինուորական վերանորոգութեան և Տանիմարքայի հետ նաւարկութեան իրաւանց մէկ քանի խնդիրներն, խորհրդասենեկաց և Աւագածողովն համաձայնութիւնն երեք չխռովեցաւ յետ գահընկալութեան Օսկար Բի, եղբօր Կարոսի Ժեի։ Նոյնը կրնանք ըսել և Նորվե-

կիոյ Հետ եղած յարաբերութեանց նկատմամբ. բայց գիտնալու ենք որ զօրաւոր է Նորվեկիացոց Հայրենասիրութիւնը. կ'ուզեն առանձին տէրութիւն ըլլալ, դատեալ 'ի Շուետաց. առանձին բանակ ունենալ, առանձին նաւատորմիդ, առանձին մատակարարութիւն, առանձին դրամ ու գրօշակ: «Սկանտինաւեան թերակղզոյն երկու եղբայրակից ժողովրդոց միութիւնն, ըսաւ Սակար Բ. գահընկալութեան ժամանակ, պիտի հաստատուի օր քան զօր՝ որչափ այս երկու տէրութիւնք յառաջն բարոյապէս ու նիւթապէս: Բայց այս բարձրագոյնութիւնն լաւ ընդունակութիւնն չի գտաւ 'ի Նորվեկիացոց, իբրեւ գուշակ անձկազոյն ևս միութեան ընդ Շուետիոյ: Ուստի արմատական կուսակցութիւնը ջանաց ջնջելու սահմանադրութեան այն յօդուածը՝ որոյ զօրութեամբ կրնար թափաւորը կարգել ըստ Հաճոյս Շուետացի կամ Նորվեկիացի մը՝ իբրեւ ետեղապահ արքայութեան. որով յայսմ Հետէ այդ պալատօնը Նորվեկիացոյն միայն պահուած է: Պէտք է ժողովուրդը չի գրգռելու համար յարգել երբեմն իր իրաւունքները:

Տանիմարքա՝ խորհրդանշական կառավարութիւն ընդունեցաւ վերջերս, որոյ սահմանադրութիւնն 1849ին կը սկսէր, բայց վերստին 'ի քննութիւն առնուած էր 1866ին: Դանեաց խորհրդասենեակն կըրկին է՝ նման Շուետաց: Բարձրագոյնն՝ 'ի վաթսուս և վեց անդամոց կը բաղկանայ, որոց երկուսսանքն թագաւորէն կ'անուանուին, և մնացածները բուէիւք կ'ընտրուին: Իսկ ստորինը՝ 'ի հարիւր և երկու անդամոց, ընտրեալք ուղղակի կերպով, որ ուրիշ արտօնութիւն չունի՝ բայց եթէ ինքը կը քննէ նախ ելումուտական խնդիրները. և այս երկու խորհրդասենեկաց համաձայնութիւնը նախ իրարու մէջ և ապա Պալատնարանին Հետ, զլիաւոր պայման է սահմանադրական կառավարութեան 'ի Տանիմարքա: Բայց զժբարտաբար այս համաձայնութիւնն ընդհատեցաւ 1872ին. իրկու կուսակցութիւնք չարունակ կուռի մէջ են հիմա. պահպանողականը՝ որ կը բովանդակեն զազնուապետականս, զմեծամեծ կալուածատեարս և զբաղաբացիս, և արմատականը՝ որ կը յենուն գործաւորաց ու ռամկաց վրայ. տեսնանք թէ որն յաղթական սլտի ելլայ վերջապէս:

Սկանտինաւեան տէրութեանց խաղաղութիւնն ու ապահովութիւնն 'ի վտանգի է, ինչպէս 'ի ներքուստ նոյնպէս և արտաքուստ: Ընկերավարականաց ջանքերը և եւրոպական քաղաքականութեան վիճակը՝ ծանր նկատողութեանց ու մտածութեանց նիւթ եղած են այդ տէրութեանց. զորս արժան է 'ի քննութիւն առնուլ: Ըստ ինքեան երեք սկանտինաւեան աշխարհաց և ոչ մին յարմարաւորք են ընկերավարականաց նպատակին. վասն զի արուեստը չեն այնչափ յառաջագէտք և չեն երկիր անդ գործաւորաց մեծ բազմութիւն: Կրթութիւնն շատ արմատացած է անդ, և ընդհանրապէս գործաւորաց դասն գոհ է՝ եթէ միայն գտնայ իր ոգեպահիկ կերակուր. սակայն ընդհակառակն փորձը ցուցուց՝ որ ընկերավարական գաղափարն ու հակամիտութիւնն առաւել կամ նուազ զօրաւորք են սկանտինաւեան երեք ազգաց մէջ: Տանիմարքա մինչև հիմա աւելի վնասուածն է, և Շուետ ու Նորվեկիա ալ կը տեսնան օր քան զօր ընկերավարութեան տարածուիլը, թէ և տկարաբար: Գործաւորաց սակաւութիւնն, ու փոփոխակի ձեռնառու ընկերութեանց նուազութիւնը՝ զօրաւոր արգենքն են Շուետիոյ համար ընկերավարութեան տարածուելուն: Իսկ 'ի Նորվեկիա շատ աւելի դիւրամուտ եղաւ քաղաքականութեան այդ թշնամին. Նորվեկիա ուրիշ բան չէ, ըսաւ քաղաքագէտ մը, եթէ ոչ Հասարակապետութիւն թագապսակ: Աջանապատութեան տիտղոսք եղածեալ են այդ երկրին մէջ, և կը խլրտի երբեք երբեք շարժումն Հասարակապետական:

Տանիմարքա կենդրոն եղած է ընկերական յուզմանց: Իր Գերմանիոյ մերձաւորութիւնն, ուր գործաւորաց դասն զանգեալ է կարծես ընկերավարական գաղափարօք, վտանգաւոր եղած է իրեն: Իմացուցեալ 'ի մեծ գորմանս ամենեցուն, թէ ներագգային ընկերութիւն մ'ալ կայ եղեր 'ի Տանիմարքա, սկսեալ 1872 ամէն, իրեն գործոց կենդրոն առնելով Աարուս քաղաքը՝ 'ի Եւրոպան: Տարածուեցաւ այս ախտըն յաղողութեամբ նախ շինականաց ու փոքրիկ կալուածատեարց մէջ, և ապա

ձգեցաւ մինչև՝ ի Քորենհակ, աշակերտելով իրեն մեծ բազմութիւն գործաւորաց, իայց կառավարութիւն կրցաւ մէկէն առջևն առնուլ, կալանաւորելով զառաջնորդս յուզմանն:

Այս խռովարար ընկերութիւններէն զառ, զարծնալ Եւրոպիոյ քաղաքականութեան ընդհանուր վիճակը՝ ծանր մտածութեանց նիւթ եղած է, ըսինք, սկանտինաւեան տէրութեանց: Շուեռ, որ լաւ կը ճանչնայ վտանգը, կը ջանայ միշտ ապահովել ինքն զինքն ընդդէմ ամենայն պատահարաց: 1855ին թիչ մնաց Ռուսիոյ հետ պատերազմի պիտի բռնուէր գրգռմամբ Գաղղիոյ ու Անգղիոյ. բայց գիտցան ի հաշտութեան կալ Բեղերսպուրիի արքունեաց հետ՝ իր վաղեմի նախանձորդին, որ ահարկու է եթէ սպառնալու ըլլայ: Մոսկուայի Ալեքսանդրական 1872ին պատեհ առիթ մ'եղաւ Շուեռիոյ՝ վկայելու իրեն բարեկամական համակրութիւնն առ Ռուսիա, որուն ցուցին ռուս օրագիրք իրենց անձութիւնը: 1864ին մտածեց նախ օգնութեան գալ Տանիմարքայի՝ Աւստրիոյ ու Բրուսիոյ դէմ՝ տուած անհաւասարազօր պատերազմին մէջ, բայց լաւագոյն զատեց ապա չգրգռել անօգուտ ցոյցերով Պ. Պիզմարքի ցատուժը: Հիմա Գերմանիոյ ու Շուեռի մէջ եղած յարաբերութիւնքն գուհացուցիչ են:

Բայց Շեղվիկի դժուարին և անորոշ գրից մէջ կը գտնուի. և գերմանական գործակատարաց լեզուն ու գործերն ամենևին ակնկալութեան գուռ մը չեն բանար նորա առջին: Թէ որ հայրենասէր Դանելիք իրենց կողմանէ փափաք մը յայտնելու ըլլած միանալու Տանիմարքայի հետ, սաստիկ խստութեամբ կը պատուհասուին: Թէ որ օրագիր մը նոյն տեսակ հակամիտութեան ցոյց տայ, խմբագրապետն մէկէն կ'աքսորուի: Թէ որ դանեցի մը յայցելուութիւն գալ ընտանեացը ի Շեղվիկ, իբրեւ կոսկածաւոր կը համարուի և երբեմն նաև կ'արտաքսուի իբրեւ խռովարար:

Չանաղան անգամ այնպէս կարծուեցաւ թէ իրաց այս ողորմ վիճակը պիտի դադրի: Գերմանիոյ կայսերական իշխանն անցեալ տարի այցելութիւն մ'ըրաւ Տանիմարքայի Թագաւորական ընտանեաց, և ի դարձին կը յուսացուէր թէ պիտի լուծուի խնդիրը:

Մօտերս Տանիմարքայի Թագաւորական իշխանը Պետլին գնացեր էր, ուր կը գտնուէր յայնժամ և Ռուսաց Կայսրն. ուստի կարծուեցաւ թէ սորա միջնորդութեամբ հայտութիւն ըլլայ ընդ մէջ Գերմանիոյ և Տանիմարքայի, բայց երկու առթից մէջ ալ ակնկալութիւնքն ի դերեւ ելան: Անցեալ տարի Պ. Քրիկէր այցելութիւն մ'ըրաւ Պ. Պիզմարքի, որ քաջալերեց զնա համակրական խօսքերով, և յոյս տուաւ որ խնդրոյն լուծման վայրկեանն պիտի հասնի պատեհ ժամանակին: «Ունիմ աչացս առջին, ըսաւ Պ. Պիզմարք, քառասուն և մէկ միլիոն գերմանական ժողովուրդ, որոյ փափաքն էր հարկ է որ նկատողութեան առնուի: Պէտք չէ մոռնաւս որ նոյն իսկ Անգլիք կ'ուզեն յառաջ մղել չարունակ իրենց ագգային պահանջները»: Բայց այս խօսքէն ետքը խնդիրն և ոչ քայլի միով չափ յառաջեց. թէ և Տանիմարքայի Թագաւորը Խորհրդարանին նոր բացման առթիւ ըրած ատենաբանութեան մէջ կը յուսացնէր թէ մօտ է խնդրոյն լուծման և խաղաղութեան վայրկեանն:

Ի՞նչ լուծումն պիտի ունենայ արդեօք: Չայն ելաւ թէ Պետլինի պաշտօնարանն ինչ ինչ առաջարկութիւններ ըրեր է Տանիմարքայի՝ գերմանական կայսերութեան հետ միացնելու համար, թողլով իրեն բուր Շեղվիկը, որ եթէ կատարուելու ըլլայ, Տանիմարքայի Թագաւորն Պաիէրայի Թագաւորին զիրքը կ'առնու: Այս ծայնը, ինչպէս բնական ալ էր, յուզեց զգոյր աշխարհ: Ռուս օրագիր մը, Հիւսիս անուն, (Le Nord), գուցէ պաշտօնական աղբիւրէ ներընչեալ, այս ծայնն անտեղի համարեցաւ ու ըսաւ. « Պ. Պիզմարք չի կրնար այդպիսի վրիպակ գործել»: Բայց անգղիական օրագիրք աւելի ծանր ու հեռատես կերպով մտածելով, ըսին թէ Պ. Պիզմարք կըրնայ այդպիսի մտածութիւն մ'ունեցած ըլլալ: — Տարակոյս չկայ որ ճմարտութիւնն այդ երկու օրագրաց կարծեաց մէկն է: Շատ հաւանական է կարծել որ Պ. Պիզմարք Շեղվիկը ետ տալու առեն՝ որուն կը փափաքի Տանիմարքա յայնքան ժամանակաց, ուղած ըլլայ օգուտ մը քաղել անկէ: Կըրնայ օրինակի համար համարուիլ որ այս չնորճման իբրեւ զին առաջարկէ Տանիմարքայի քաղաքական ու վաճառականական

դաշնադրութիւն մը: « Ամենեւին հետեւ է ինծմէ, կրնայ ըսել Պ. Պիզմարք Տանիմար-քայի, Թշնամի ըլլալ քեզի. և բու անվտա-թիւնդ առ իս՝ որչափ անիրաւ է այնչափ ալ վնասակար: Կը մաշիս չարունակ պատե-րազմի պատրաստուելով, որ ուրիշ վախ-ճան չի կրնար ունենալ, բայց եթէ կործա-նել գրեզ, Յայտնի է թէ Անգղիայէն յոյս չունին, որ յառաջ մղեց գրեզ 1863ին և ապա Թողուց երկու զինուորական ազ-գաց ձեռքը, Աւստրիոյ և Բրուսիոյ: Չու-նիս յոյս Փաղղիայէն, որ կարող չէ դար-մանել շուտով իր մեծախոյզ վերքերը: Աւ-ստրիա անտարբեր է Բրակայի Դաշնա-դրութեան հինգերորդ յօդուածոյն: Իսկ Ռուսիա դաշնակից է ինձ, թէ և օտարք հակառակը կը կարծեն: Գուցէ յոյսդ սկան-տինական ազգաց վրայ կը դնես. բայց անիկա ցնորական բանդագուշանք մ'է, որ եթէ տեղի ալ ունենայ, ուրիշ բանի չի ծա-ռայեր՝ բայց եթէ գրողելու մերձաւորացդ ահաճութիւնը, առանց ապահովելու բու վիճակդ: Ի՞նչ է 150 կամ 200 հազար զօ-րաց բանակ մը 1 միլիոն բանակի զօրու-թեան առջին: Ի՞նչ է բու և Շուեմիոյ նա-ւատորմը՝ հանդերձ կտրիճ նաւաստեօք, մեր և Ռուսիոյ ծովային զօրութեան գի-ւսաց: Գերմանիա հիմա մէկէ վախ չու-նի, և կ'ուզէ ինքն զինքն վեհանաճն ցուցնել առ քեզ: Գո՛հ չըլլար տալ քեզի մէկ բանի նահանգ 200,000 բնակչօք, կ'ուզէ անգա-մակցել գրեզ իր կայսերութեանը, ամենա-մեծ բարգաւաճանք մը խոստանալով վա-ճառականութեան ու ձեռնարուեստից: Ա-ռաջի առնէ քեզ իր դաշնակցութիւնն, ո-րով կ'աղատիս այն մեծամեծ ու անօգուտ զոհերէ՝ որ կ'ընեն յոտին պահելու համար նաւատորմդ, բանակդ և ամրութիւն-ներդ: Այսպիսի են անշուշտ Պ. Պիզ-մարքի խորհուրդներն, բայց չենք գիտեր թէ Տանիմարքա անկնջ պիտի կախէ:

Երկու տարի առաջ Մոսկուայի Օրագիրն (Gazette de Moscou), տեսնալով Տանիմար-քայի անհաստատ վիճակը ունախադուշա-կելով որ կրնար արգել ըլլալ Ռուսիոյ ու Բրուսիոյ մէջ եղած բարեկամութեան, ը-սաւ թէ Բրուսիա չունի ծանր պատճառ մը չկատարելու Բրակայի դաշնադրու-թեան հինգերորդ յօդուածը, եթէ Տանի-մարքա չէզոքութեան վիճակ մ'առնու: Տա-

նիմարքայի չէզոքութիւնն եթէ ստուգուի, Գերմանիա այնուհետեւ վախ չունենար որ Ալսէն ու Տիւրքի կողմներն իբրեւ կենդրոն ըլլան շարժմանց թշնամոյն: Այս չէզո-քութեան գաղափարը թէ և չմերժեցին գերմանական օրագիրք, բայց բոլորովին տարբեր իմաստ մը տուին՝ ըսելով թէ Տա-նիմարքա պէտք է հրաժարի Բրակայի դաշ-նադրութեան հինգերորդ յօդուածոյն պա-հանջմանէն, ի՞ գին այն մեծամեծ շահուց՝ զոր պիտի ունենայ չէզոքութեամբ: Ըստ մտաց Մոսկուայի Օրագրին, Գերմանիա ետ պիտի դարձնէր Եւրոպիկի հիսսիսային նահանգները՝ ի՞ գին չէզոքութեան, և Տա-նիմարքա գո՛հ պիտի ըլլար ընդունելով զչէ-զոքութիւն՝ առանց ամենեւին ուրիշ բան պահանջելու: Չենք գիտեր թէ Գերմանիա չափաւորեց արդեօք մինչև հիմա իր այս մտածութիւնքը: — Չայն ելաւ որ Անգղիա ու Ռուսիա միտք ունին առաջարկել տէրու-թեանց Տանիմարքայի չէզոքութիւնը. բայց այս առաջարկութիւնը կրնայ ծանր դժուա-րութիւններ յարուցանել ի՞ Պետլին և ի՞ Փոքեհնակ: Թէ որ երկու վերոյնշանակեալ տէրութիւնք առաջարկեն Գերմանիոյ՝ ետ դարձնել Եւրոպիկի հիսսիսային նահանգ-ները, Գերմանիա կրնայ մերժել այնպիսի միջամտութիւն մը՝ որուն Աւստրա-հունգա-րական տէրութիւնն միայն իրաւունք ունի: Իսկ թէ որ խորհուրդ տան Տանիմարքայի ընդունել զչէզոքութիւն՝ առանց գոհացնե-լու գինքը Եւրոպիկի խնդրոյն մէջ, կը պա-տասխանէ անտարակոյս թէ իր շահն և պատիւը չեն ներքի Թողուլ 200,000 Դա-նեցիս: Բայց ուրիշ կողմանէ Տանիմարքա կուրօրէն պատերազմ չի բանար Գերմա-նիոյ դէմ՝ կորուսածը ձեռք բերելու հա-մար, որ Փաղղիոյ պարտութեամբ կորոյս ամեն վրէժանգորութեան ակնկալութիւն-ները: Ուստի ուրիշ բան չի մտածեր՝ բայց եթէ խաղաղութեամբ կեալ իր դրացեաց հետ՝ Ռուսիոյ, Գերմանիոյ և Շուեմի, պաշտպանելով իր անկախութիւնը:

Կը մնայ վերջապէս Տանիմարքայի իբրեւ վերջին միջոց սկանտինական միութիւնը, որ գուցէ կատարուած էր 1863ին, յետ մա-հուան Փրեզերիկոսի Նի, թէ որ Լորտ Բալ-մերսդըն մեծագոր տէրութեանց հաւանու-թեամբ կնքած չըլլար Լոնտոնայի Դաշնա-դրութիւնը, առանց որոյ գիւրութեամբ կը լուծուէր Տանիմարքայի խնդիրը: Հոլլանդի

և Լաւնպուրիի դքսութիւնն Գերմանիոյ կը մնային իրաւամբ, և Շլեզվիկի ժողովուրդն կ'որոշէր քուէարկութեամբ թէ որ աղջութեան կ'ուզէ վերաբերիլ, գերմանականին թէ սկանտինաւեանին: Եւոլլանտ և շրջակայ կղզիք միութեան դաշն մը կը գնէին Շուեաթի հետ՝ նման Նորվեկիոյ, և ասով կ'ազատէինք 1866ին պատերազմէն և իր աղետալի հետեանքներէն. այս միութիւնն նոյն իսկ պատերազմին ժամանակ կարելի էր: Լոնտոնայի Գեասպանածոդովոյն մէջ Կարլոս Ժե սկիզբ տուաւ այս միութեան. կը պատրաստուէր՝ թէ որ ընդունուէին իր առաջարկութիւնքը՝ բողոքել ամենայն զօրութեամբ և հնարիք Շլեզվիկի Դանեսաց մասին Գերմանիոյ անցնելուն վերայ, ջանալով միացնել զայն դարձեալ Տանիմարքայի հետ: Եպիսկոպոսն Մոնրատ, գլուխ Պաշտօնարանին Դանեսաց, պատասխանեց որ՝ « Զիւսիսակողման քաղաքական միութիւնն երայխաւորութիւն մը պիտի ըլլայ Տանիմարքայի՝ ստանալու և դքսութիւնք » — Կարլոս Ժե սկիզբեց Աւստրիոյ ու Բրուսիոյ հետ պատերազմ բանալու գաղափարը Էյտէրի գիծը ստանալու համար, և իրաւունք ունէր, զոր ապացուցին ապա 1866 և 1870 ամաց դէպքերն: Ռուսիա ու Գերմանիա՝ Պալզիկ ծովու մէջ գիրար գերազանցելու ջանքն արդէն իսկ յայտնած են. Տանիկի նախանձաւոր է Լիէպակի և Քրոնշտատ՝ Քիէլի: Ուրեմն կը կատկածուի կամ պատերազմ և կամ հումանաձայնութիւն: Պալզիկ ծովուն տիրապետութեան համար եթէ կռիւ մը ծագի Ռուսիոյ և Գերմանիոյ մէջ, աղիտարբեր կ'ըլլայ երկու տէրութեանց ալ: Համաձայնութեան միջոց մը կայ. գրաւումն Եւոլլանտի՝ Ի Գերմանիոյ, և սկանտինաւեան թեւրակղզոյն՝ Ի Ռուսիոյ: Բայց սկանտինաւեան ազգաց միութիւնն իրարու մէջ կըրնայ արդեօք այսպիսի խորհրդոյ մը առջին առնուլ: և հակառակաւ, եթէ ըլլայ միութիւն՝ կրնայ արդեօք Տանիմարքա ապրեցընել ինքն զինքը գերմանական զօրութեանէն, և Շուեաթ հաստատուն կենալ պատերազմի մը հետեանաց դէմ՝ ընդ մէջ Ռուսիոյ և Գերմանիոյ: Գաղտնիք ապագային:

Մեր ժամանակաց եւրոպական քաղաքագիտաց մէջ՝ Կորչաքոֆ իշխանն արժանապէս մեծ անուն ունի. որոյ վրայ արդէն առիթ ունեցանք խօսելու Բազմավիպիս մէջ՝, գրելով ընդարձակօրէն իր կենսագրութիւնը. ուստի աւելորդ կը համարինք կրկնել նոյն բաները: Բայց հօս իր դէմքն ներկայացուցած ատեննիս, բարեպատեհ առիթ մը կը գտենք երկու խօսք գրուցել երեւելի քաղաքագիտին վերջին գործոց վրայ, որոց մէջ ամենէն գլխաւորն Պրիւքսելի դեսպանաժողովն է:

Ռուսիա, ինչպէս բազում առթից մէջ տեսնուած է, չէ բարեկամ պատերազմի, և ջանացած է միշտ 'ի նոյն յորդորել նաև ուրիշ տէրութիւնները: Եւրոպա թէպէտ արտաքուստ հանգարտ՝ բայց 'ի ներքուստ յուզեալ վիճակի մէջ է. ուստի Ռուսիա զատյաճ դատեց ժամանակը, և մտածեց ժողով մը գումարել, և զանազան պայմաններով՝ թէ և ոչ բառնալ, այլ գէթ նուազել պատերազմի աղէտքը: Տարւոյս առաջին կիսուն՝ Ռուսիոյ կայսերութեան Ատենադպիրն Կորչաքով՝ շրջաբերական մը հանեց առ ամենայն Տէրութիւնս, հրաւիրելով զամենեւին օրինաւորապէս՝ առաջիկայ գտնուիլ ներկայացուցչի ձեռքով 'ի ժողովն Պրիւքսելի, որ պիտի գումարուէր խորհրդու պատերազմի վրայ: — Տէրութիւնք Կորչաքով իշխանին այս խաղաղամիտ հրաւերքն ընդունելով, որոշեալ ժամանակին իրենց երեսփոխաններն զրկեցին 'ի Պրիւքսելի, ինչպէս զժուարալուծելի էր, ուստի բազմադիմի հակառակութեանց ենթակայ եղաւ յիւրաքանչիւր ազգաց, ինչպէս որ կը գուշակուէր յառաջագոյն: Ռուսիոյ ներկայացուցչին՝ որ նախագահ բազմիւր էր ժողովոյն, ամենայնփոյթ տարաւ հասնելու աշխարհ